ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Տեր-Հարությունյան, ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ ամբիոնի պետ,
տեխնիկական և իրավաբանական գիտությունների թեկնածու,
փոխգնդապետ

Մարդկության ողջ պատմության ընթացքում անվտանգությունը միշտ հանդիսացել է անձնական և հասարակական կենսագործունեության հիմնական պայման: Անվտանգության ապահովման անհրաժեշտությունն այն հիմնական պատճառներից է, որը ստիպել է մարդկանց համախմբվել այս կամ այն կազմակերպված խմբերում, համակեցություններում և պետություններում: Այստեղից էլ՝ անվտանգության ապահովման անհրաժեշտությունն առաջացել է գիտակից (բանական) մարդու հետ և հետագայում հանդես է եկել որպես գլխավոր նպատակային ուղղություն՝ գոյություն ունեցող յուրաքանչյուր պետության, ժողովրդի, հասարակության զարգացման քաղաքականության մեջ, ինչը տարբեր պատմական ժամանակաշրջաններում արտացոլում է գտել անվտանգության բազմաթիվ համակարգերում:

Այսօր ոչ ոք չի կասկածում ժամանակակից հասարակությունների և պետությունների բառապաշարում բավական հաստատուն տեղ գտած «ազգային անվտանգություն» հասկացության շուրջ:

Օգտագործելով անվտանգության հայեցակարգի ժամանակակից գաղափարա-կատեգորիական ապարատը՝ ՀՀ օրենսդրությունում սահմանվել է ազգային անվտանգության համապատասխան հասկացությունը:

ԱԱ արդյունավետ ապահովման տեսանկյունից «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» ընդունումը ԱԱ ապահովմանն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է: ԱԱ ապահովումը ենթադրում է նաև պետական կառավարման առկա համակարգի և դրա կառուցվածքի կատարելագործում՝ վերջինիս գործունեության ուղղությունները համապատասխանեցնելով ԱԱ ռազմավարությունում ամրագրված հիմնադրույթներին:

Ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը:

Ազգային անվտանգության մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Ազգային անվտանգության մարմինների մասին օրենքով, Քրեական դատավարության օրենսգրքով, Քրեական օրենսգրքով, Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Գլոբալացման ներկայիս պայմաններում աշխարհաքաղաքական նոր զարգացումները կարող են այնպիսի տարաբնույթ սպառնալիքների առաջացման պատճառ հանդիսանալ, որոնց դիմակայմանն անհրաժեշտ գործառույթները խորթ են թե՛ պետության և թե՛ հասարակական կառույցների համար: Հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ԱԱ ապահովումը պարբերականություն և հետևողականություն պահանջող գործընթաց է, կարելի է ասել, որ նման պայմաններում պետությունը պետք է կարողանա ճիշտ որոշել, թե որ սուբյեկտը կամ սուբյեկտները պետք է ներգրավված լինեն նոր սպառնալիքների դիմակայման ու չեզոքացման գործընթացներում: Պետությունն անհրաժեշտության դեպքում պետք է կարողանա նաև որոշել, թե որ սուբյեկտին (ինստիտուտին) կամ ինստիտուտներին է առավել նպատակահարմար պատվիրարկել լրացուցիչ լիազորություններ առաջացած խնդիրների լուծման համար: